

Հավելված
Արցախի ներդրումային հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2019 թվականի «15» մարտի
թիվ 10 որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգի նպատակն է պետական ֆինանսական աջակցության ցուցաբերմամբ նպաստել Արցախի Հանրապետության շրջաններում քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավմանը:
2. Սույն կարգը կարգավորում է Արցախի Հանրապետության քաղաքացիների կողմից Արցախի Հանրապետության շրջաններում գտնվող բնակելի տներ ու բնակարաններ գնելու, վերանորոգելու, բնակելի տներ կառուցելու և բնակելի տներ ու բնակարաններ կցակառուցելու նպատակով տրամադրվող պետական ֆինանսական աջակցության իրավական հիմքերի, սկզբունքների, ձևերի ու ֆինանսավորման մեխանիզմների հետ կապված հարաբերությունները:
3. Սույն կարգի գործողությունը տարածվում է սույն կարգով պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք ունեցող Արցախի Հանրապետության քաղաքացիների վրա:

II. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են.
 - 1) *շահառու*` սույն կարգով սահմանված պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք ունեցող և սույն կարգի III բաժնի պայմաններին համապատասխանող Արցախի Հանրապետության քաղաքացին և նրա ամուսինը կամ սույն կարգով սահմանված միածնող ընտանիքը կամ 32 տարին լրացած Արցախի Հանրապետության քաղաքացին, ով սույն կարգով սահմանված պետական ֆինանսական աջակցություն ստանալու հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի գտնվում ամուսնության մեջ, չունի անչափահաս երեխաներ, խնամարկյալներ, հոգաբարձության ներքո անձինք կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձը, իսկ բնակելի տարածքի վերանորոգման դեպքում` սույն կարգով սահմանված պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք ունեցող և սույն կարգի III բաժնի պայմաններին

համապատասխանող Արցախի Հանրապետության քաղաքացին. (*փուփ.*՝ 27.12.2019թ. *ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում*)

2) երեխա՝ 18 տարին չլրացած անձ.

3) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ՝ 18 տարին լրացած այն անձը, ում ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են և ում բնակարանային հարցի լուծման հանդեպ պետությունը ստանձնել է պարտավորություն.

4) բազմազավակ ընտանիք՝ Արցախի Հանրապետությունում բնակվող ընտանիք, որտեղ ծնվել և/կամ որդեգրվել և խնամվում են չորս և ավելի անչափահաս երեխաներ.

5) գոհված զինծառայողի զավակ՝ Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս գոհված կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս գոհված զինծառայողին հավասարեցված զինծառայողի զավակ, ով հանդիսանում է իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերող և իրականացնող, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծող ու դրանք կատարող չափահաս անձ.

6) առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամ՝ Արցախի Հանրապետության անժամկետ զինվորական հաշմանդամություն ունեցող առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամ.

7) միածնող ընտանիք՝

ա. ամուսինը մահացած և իր խնամակալության ներքո երեխա ունեցող անձ,

բ. ամուսնալուծված և իր խնամակալության ներքո երեխա ունեցող անձ, ում ամուսնալուծության փաստը արձանագրված է հայտը ներկայացնելու օրվանից առնվազն հինգ տարի առաջ կամ չամուսնացած անձ (բացառությամբ միայնակ մայրերի), ում խնամքի ներքո միակ կամ կրտսեր երեխան առնվազն հինգ տարեկան է,

գ. երեխա որդեգրած միայնակ անձ,

դ. առանց օրինական ամուսնու (ամուսնության մեջ չգտնվող և երեխայի ծննդյան վկայականում հոր մասին տեղեկությունների բացակայության կամ երեխայի հոր մասին գրանցումը սահմանված կարգով մոր ցուցումով կատարված լինելու դեպքում) երեխա ունեցող և առանց հոր մեծացնող մայր՝ միայնակ մայր. (*փուփ.*՝ 27.12.2019թ. *ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում*)

8) փախստական՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փախստականի կարգավիճակ և քաղաքացիություն ստացած անձ, այդ թվում՝

վերջինիս փախստականի վկայականում նշված՝ մինչև 1993թ. ծնված ընտանիքի անդամ. *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

9) պայմանագրային զինծառայող՝ Արցախի Հանրապետության զինված ուժերում պայմանագրային հիմունքներով մարտական հերթապահություն իրականացնող զինծառայող.

10) սպայական կազմի զինծառայող՝ Արցախի Հանրապետության զինված ուժերի սպայական կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայող.

10.1) ԱՀ կառավարության 2020թ. մարտի 5-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված շահառուներ՝ ԱՀ կառավարության 2020թ. մարտի 5-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված շահառուներ, որոնք Հիմնադրամի հետ կնքել են բնակելի տուն կառուցելու նպատակով տրամադրվող անհատույց պետական աջակցության գումարի նպատակային օգտագործման պայմանագիր և ստացել պայմանագրով սահմանված գումարը. *(փոփ.՝ 23.03.2020թ. ԱՆՀ ՀԽ թիվ 15 որոշում)*

11) ընտանիք՝ ամուսնության վրա հիմնված, միևնույն բնակելի տարածքում փաստացի բնակվող քաղաքացիների սոցիալական փոքր խումբ (ամուսիններ, նրանց ծնող(ներ) և զավակ(ներ), զավակ(ներ)ի ամուսին(ներ)), որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն և ունեն ընդհանուր բյուջե. *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

12) մերձավոր ազգականներ՝ ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականներ՝ ծնողներ ու զավակներ, պապ, տատ ու թոռներ, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրներ ու քույրեր, մորաքույր, հորաքույր, մորեղբայր, հորեղբայր և նրանց զավակներ, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.

13) բնակարան՝ բնակության համար նախատեսված շենքում գտնվող և իրավունքների պետական գրանցում իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածք.

14) բնակելի տուն՝ բնակավայրի տարածքում առանձին հողամասի վրա կառուցված, առանձին փոստային համար ունեցող, բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով օժտված, իրավունքների պետական գրանցում իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կառույց.

15) բնակելի տարածք՝ Արցախի Հանրապետության շրջաններում գտնվող բնակարան կամ բնակելի տուն.

16) բնակելի տարածքի ձեռք բերում՝ բնակարանի կամ բնակելի տան գնում կամ բնակելի տան կառուցում.

17) կառուցում՝ շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր՝ ուղղված բնակելի տարածքի շինարարությանը, որը նախատեսում է՝

- հիմքից նոր բնակելի տան կառուցում,
- բնակելի տան նոր հարկի կառուցում կամ կցակառուցում,
- բնակարանի կցակառուցում,

- կիսակառույց բնակելի տան շինարարության ավարտում,
- բնակելի տան ամրացում և հիմնանորոգում,
- սանհանգույցի կառուցում.

18) վերանորոգում՝ շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր՝ ուղղված շենքի կամ կառուցվածքի, դրա առանձին մասերի, կոնստրուկտիվ տարրերի, ինժեներական հաղորդակցուղիների ու սարքավորումների աշխատունակության և շահագործողական ցուցանիշների վերականգնմանը, որը կապված չէ վերակառուցման հետ և ենթադրում է՝

- տանիքի, հատակի փոխարինում,
- դռների, լուսամուտների փոխարինում,
- սանհանգույցի վերանորոգում,
- ջրմուղ-կոյուղու և/կամ ջեռուցման անհատական համակարգերի տեղադրում,
- արտաքին և/կամ ներքին հարդարման աշխատանքների կատարում,
- բակի բարեկարգում,
- բնակելի տան պլանավորման փոփոխություններ չենթադրող այլ աշխատանքներ.

19) Արցախի Հանրապետության շրջաններ՝ սույն կարգի իմաստով Արցախի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր բնակավայրերը, բացառությամբ Ստեփանակերտ և Շուշի քաղաքների.

20) առաջնային շուկա՝ շուկա, որտեղ իրականացվում է նոր (նոր կառուցված կամ վերակառուցված կամ նոր կառուցվող) բնակելի տարածքի առուվաճառքի գործարք, որտեղ որպես վաճառող հանդես է գալիս.

ա. կառուցապատող տնտեսվարող սուբյեկտը.

բ. պետությունը կամ համայնքը կամ պետության ստեղծած հիմնադրամը, եթե բնակելի տարածքը վերջիններիս կողմից ձեռք է բերվել անմիջապես կառուցապատողից:

Սույն կարգի իմաստով առաջնային շուկա է համարվում նաև շահառուի կողմից նոր բնակելի տան կառուցումը.

21) երկրորդային շուկա՝ Արցախի Հանրապետության տարածքում գոյություն ունեցող բազմաբնակարան շենքերի բնակարաններ և բնակելի տներ, որոնք ձեռք են բերվում ըստ նշանակության օգտագործող սեփականատերերից՝ անկախ կառուցման տարեթվից.

22) նպատակային փոխառություն (այսուհետ՝ փոխառություն)՝ պետական աջակցություն ապահովող մարմնի կողմից շահառուին բնակելի տարածք ձեռք բերելու և/կամ վերանորոգելու նպատակով տրամադրվող փոխառություն, որն ապահովված է տվյալ անշարժ գույքի առաջնային գրավով (հիմնական ապահովություն), իսկ անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ այլ անշարժ և/կամ շարժական գույքի գրավով և/կամ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձի երաշխավորությամբ.

23) անշարժ գույքի շուկայական արժեք՝ անշարժ գույքի գնահատողի որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հաշվետվությունում նշված անշարժ գույքի շուկայական արժեքը.

24) պետական ֆինանսական աջակցություն՝ պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվող աջակցություն, որն արտահայտվում է հիփոթեքային վարկի կանխավճարի՝ անհատույց կամ նպատակային անտոկոս փոխառության տրամադրմամբ և(կամ) հիփոթեքային վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի կամ լրիվ սուբսիդավորմամբ, հիփոթեքային աջակցության ծրագրերով փոխառությունների և(կամ) միանվագ անհատույց գումարների տրամադրմամբ. (փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)

25) պետական ֆինանսական աջակցությունն ապահովող մարմին՝ սույն կարգով սահմանված ձևերով պետական ֆինանսական աջակցությունն իրագործող մարմինն Արցախի ներդրումային հիմնադրամն է (այսուհետ՝ Հիմնադրամ).

26) շահառուների նպատակային խմբեր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիներ, ովքեր ձեռք են բերում կամ վերանորոգում բնակելի տարածք և համապատասխանում են սույն կարգով սահմանված չափորոշիչներին.

27) բնակարանային պայմանների վատթարացում՝ պետական ֆինանսական աջակցության տրամադրման օրվա դրությամբ շահառուի կողմից վերջին հինգ տարիների ընթացքում նրան սեփականության իրավունքով պատկանող բնակելի տարածքի օտարում.

28) միանվագ անհատույց գումարի տրամադրում՝ պետական ֆինանսական աջակցությունն ապահովող մարմնի կողմից շահառուին բնակելի տարածք գնելու նպատակով միանվագ անհատույց գումարի տրամադրում՝ սույն կարգով սահմանված պայմաններով:

III. ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Պետական ֆինանսական աջակցությունը կարող է ստանալ 18 տարեկանից մինչև 65 տարեկան շահառուն:

Փոխառությունը կարող է տրամադրվել շահառուի գավակին՝ շահառուի համաձայնությամբ և երաշխավորությամբ:

6. Շահառուն պետական ֆինանսական աջակցությամբ բնակարանային պայմանների բարելավման յուրաքանչյուր ձևից՝ բնակելի տարածքի ձեռք բերում և(կամ) վերանորոգում, կարող է օգտվել միայն մեկ անգամ, բացառությամբ սույն կետում նշված հետևյալ դեպքերի.

1) բնակելի տան կառուցման նպատակով փոխառությունների տրամադրման աջակցությունից շահառուն կարող է օգտվել նույն բնակելի տան համար մեկից ավելի անգամ, սակայն փոխառությունների հանրագումարը չպետք է գերազանցի սույն կարգի 11-րդ կետում նշված սահմանափակումները.

2) հիմքից նոր բնակելի տան կառուցման աջակցությունից օգտվելու դեպքում շահառուն կարող է օգտվել նույն բնակելի տան վերանորոգման աջակցությունից կառուցման աշխատանքների ավարտից հինգ տարին լրանալուց հետո.

3) բնակելի տարածքի վերանորոգման նպատակով փոխառությունների տրամադրման աջակցությունից շահառուն կարող է օգտվել մեկից ավելի անգամ, սակայն փոխառության գումարի հանրագումարը չպետք է գերազանցի սույն կարգի 11-րդ կետում նշված սահմանափակումները.

4) այն շահառուն, ում հաշվարկմամբ ստացվել է սույն կարգով սահմանված բնակելի տարածքի ձեռք բերման և/կամ վերանորոգման պետական ֆինանսական աջակցություն, առանձին ընտանիք կազմելու դեպքում կրկին կարող է օգտվել կարգով նախատեսված պետական ֆինանսական աջակցության նույն ձևից: *(փոփ. և լրաց.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

7. Պետական ֆինանսական աջակցությունը տրամադրվում է այն շահառուին՝

1) ով բնակելի տարածք է ձեռք բերում սույն կարգի 4-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանված բնակավայրում և ով (ինչպես նաև՝ ամուսինը) Արցախի Հանրապետության տարածքում չի հանդիսանում բնակելի տարածքի սեփականատեր կամ հանդիսանալով սեփականատեր՝ տվյալ բնակելի տարածքի ընդհանուր մակերեսը նրա ընտանիքի մեկ անձի հաշվարկով չի գերազանցում 18 քառակուսի մետրը՝ բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով սահմանված դեպքի: *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

Բնակելի տարածքի մակերեսում չի ներառվում՝ նկուղային և կիսանկուղային հարկը, ավտոտնակը, բաց պատշգամբը և բնակելի տանը կից օժանդակ շինությունները:

2) ով բնակելի տարածք է վերանորոգում սույն կարգի 4-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանված բնակավայրում:

8. Մինևսույն բնակելի տարածքում երկու և ավելի ընտանիք համատեղ բնակվելու դեպքում՝ առանձնացող ընտանիքը կարող է օգտվել բնակելի տարածքի ձեռքբերման նպատակով պետական ֆինանսական աջակցությունից՝ անկախ համատեղ բնակության բնակելի տարածքի մակերեսի մեծության, ձեռքբերման հիմքի և համատեղ սեփականության իրավունքի առկայությունից: *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

9. Սանհանգույցի բացակայության դեպքում շահառուն կարող է օգտվել պետական ֆինանսական աջակցությունից՝ սանհանգույց կառուցելու նպատակով, անկախ սեփականության իրավունքով նրան պատկանող բնակելի տարածքի մակերեսի մեծությունից:

10. Այն շահառուն, ում՝

1) բնակարանային հարցի լուծման հանդեպ պետությունը ստանձնել է պարտավորություն, կարող է օգտվել սույն կարգով սահմանված պետական ֆինանսական աջակցության ձևերից՝ հրաժարվելով պարտադիր բնակարանային ապահովվածության իրավունքից.

2) բնակարանային հարցի լուծման հանդեպ պետությունը կատարել է ստանձնած պարտավորությունը, կարող է բնակելի տարածք ձեռք բերելու նպատակով օգտվել պետական ֆինանսական աջակցությունից համաձայն սույն կարգի 18-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ» և «դ» պարբերությունների, իսկ բնակելի տարածքի վերանորոգման համար՝ սույն կարգի 17-րդ կետի պայմանների համաձայն:

11. Պետական ֆինանսական աջակցությունն ուղղվում է շահառուի կողմից բնակելի տարածք ձեռք բերելու կամ վերանորոգելու այն գործարքներին, ըստ որոնց՝

1) բնակելի տարածքի կառուցման դեպքում 1 քառակուսի մետրի արժեքը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը, իսկ փոխառության գումարը՝ 8 000 000 ՀՀ դրամը, ԱՀ կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի թիվ 353-Ն որոշման շրջանակներում տրամադրվող անհատույց պետական ֆինանսական աջակցությունից օգտվելու դեպքում՝ 5 000 000 ՀՀ դրամը, *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀՆԹԻՎ 67 որոշում)*

2) երկրորդային շուկայից բնակելի տարածքի գնման դեպքում փոխառության գումարը չի գերազանցում 4 500 000 ՀՀ դրամը, իսկ սույն կարգի 4-րդ կետի 3-րդ, 6-րդ և 8-րդ ենթակետերում նշված շահառուների համար՝ 3 500 000 ՀՀ դրամը,

3) բնակելի տարածքի վերանորոգման դեպքում փոխառության գումարը չի գերազանցում 3 000 000 ՀՀ դրամը.

4) երկրորդային շուկայից բնակելի տարածքի գնման նպատակով փոխառություն ստանալու համար շահառուի կողմից վճարվող կանխավճարի չափը սահմանվում է առուվաճառքի գործարքի արժեքի առնվազն 10 տոկոսը. *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀՆԹԻՎ 67 որոշում)*

5) բնակելի տան կառուցման դեպքում, նախքան փոխառության պայմանագրի կնքումը, շահառուի սեփական միջոցների հաշվին կատարվող շինարարական աշխատանքների չափը սահմանվում է նախահաշվային արժեքի առնվազն 10 տոկոսը:

12. Առուվաճառքի գործարքի արժեքը չի կարող գերազանցել ձեռք բերվող բնակելի տարածքի համար՝ գնահատման մասնագիտացված կազմակերպության կողմից տրված հաշվետվությունում սահմանված շուկայական արժեքի չափը:

13. Բնակելի տուն կառուցելու նպատակով շինարարական աշխատանքների իրականացման ժամկետը սահմանվում է մինչև շինարարության թույլտվության վերջնաժամկետը, բայց ոչ ավել, քան փոխառության տրամադրման օրվանից մինչև հինգ տարին լրանալը:

14. Բնակելի տարածքի վերանորոգման նպատակով աշխատանքների իրականացման ժամկետը սահմանվում է փոխառության տրամադրման օրվանից մինչև մեկ տարին:

15. Սույն կարգով սահմանված պայմաններին համաձայն փոխառություն ստացող շահառուի պարտավորությունների մարմանը կարող են ուղղվել նաև շահառուի ընտանիքի անդամ չհանդիսացող այլ անձի եկամուտները՝ վերջինիս համաձայնությամբ, առանց համասեփականատեր դառնալու նախապայմանի:

16. Պետական ֆինանսական աջակցությամբ բնակելի տարածք ձեռք բերած շահառուին/ները ձեռք բերման օրվանից (կառուցելու դեպքում՝ բնակելի տարածքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի ստացման օրվանից) եռամսյա ժամկետում պարտավոր են հաշվառվել տվյալ բնակելի տարածքում և համապատասխան փաստաթղթերը ներկայացնել Հիմնադրամ:

IV. ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

17. Սույն կարգի 4-րդ կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերում նշված շահառուին բնակելի տարածք ձեռք բերելու և/կամ վերանորոգելու նպատակով հիմնադրամի կողմից տրվող փոխառության գումարը տրամադրվում է անտոկոս:

17.1. Սույն կարգի 4-րդ կետի 10.1-ին ենթակետում նշված շահառուին բնակելի տուն կառուցելու նպատակով Հիմնադրամի կողմից տրվող փոխառության գումարը տրամադրվում է անտոկոս: *(փոփ.՝ 23.03.2020թ. ԱՆՀ ՀԽ թիվ 15 որոշում)*

18. Հիմնադրամը պետական ֆինանսական աջակցության իրագործման նպատակով փոխառություն է տրամադրում հետևյալ ընդհանուր պայմաններով՝

1) փոխառության տարեկան տոկոսադրույքը, բացառությամբ սույն կարգի 17-րդ կետում նշված շահառուի համար, սահմանվում է՝

ա. բնակելի տան կառուցման դեպքում՝ 1 տոկոս, *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

բ. երկրորդային շուկայից բնակելի տարածքի գնման դեպքում՝ 5 տոկոս,

գ. բնակելի տարածքի վերանորոգման դեպքում՝ 5 տոկոս.

դ. երկրորդային շուկայից բնակելի տարածք գնելու և/կամ վերանորոգելու նպատակով Հիմնադրամի կողմից տրվող կամ գործող փոխառության տարեկան տոկոսադրույքի չափը նվազեցվում է ընտանիքում յուրաքանչյուր անչափահաս երեխայի հաշվով փոխառության տարեկան սկզբնական տոկոսադրույքի 10 տոկոսի չափով:

2) փոխառության գումարի մարման ժամկետը՝

ա. երկրորդային շուկայից բնակելի տարածքի գնման համար՝ 10 տարի,

բ. բնակելի տան կառուցման համար՝ 10 տարի,

գ. բնակելի տարածքի վերանորոգման համար՝ 6 տարի. *(փոփ.՝ 27.12.2019թ.*

ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)

3) փոխառության գումարի մարման ժամկետը որոշվում է կախված շահառուի տարիքից, վճարունակությունից և փոխառության գումարի չափից.

Փոխառության գումարի մարման վերջնաժամկետը չի կարող գերազանցել շահառուի՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված առավելագույն տարիքը.

4) շահառուի կողմից փոխառության վաղաժամկետ մարման համար չի սահմանվում որևէ ֆինանսական կամ այլ պատժամիջոց.

5) շահառուի վճարունակությունը հաշվարկելիս, որպես կենսաապահովման համար անհրաժեշտ ամսական գումար ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով սահմանվում է 20 000 ՀՀ դրամ.

6) շահառուի եկամուտների մեջ ներառվում են նաև բնամթերային տեսքով նրա կողմից ստացվող եկամուտները, որի չափը հաշվարկվում է համաձայն հավելվածի.

7) փոխառությունը տրամադրվում է ՀՀ դրամով.

8) բնակելի տարածքի վերանորոգման և կառուցման համար տրվող փոխառության գումարը տրամադրվում է ըստ փուլերի՝ դրա նպատակային օգտագործումը վերահսկելու նպատակով.

9) փոխառության ապահովություն է հանդիսանում՝

ա. գնվող կամ վերանորոգվող բնակելի տարածքի գրավը, իսկ կառուցման դեպքում՝ համապատասխան հողամասը և դրա վրա հետագայում կառուցվելիք բնակելի տունը ու բոլոր շինությունները (հիմնական ապահովություն).

բ. որպես փոխառության լրացուցիչ ապահովություն կարող են հանդիսանալ այլ անշարժ և/կամ շարժական գույք և/կամ այլ անձանց երաշխավորությունները.

10) փոխառությունը տրամադրվում է՝

ա. երկրորդային շուկայից գնվող բնակելի տարածքի շուկայական արժեքի մինչև 90 տոկոսի չափով.

բ. վերանորոգվող բնակելի տարածքի շուկայական արժեքի մինչև 60 տոկոսի չափով.

գ. բնակելի տան կառուցման դեպքում՝ բնակելի կառուցապատման հողամասի շուկայական արժեքի և դրա վրա առկա անավարտ բնակելի տան շինարարության համար օգտագործված շինանյութերի նախահաշվային արժեքի հանրագումարի մինչև 95 տոկոսի չափով.

դ. լրացուցիչ ապահովություն հանդիսացող անշարժ գույքի շուկայական արժեքի մինչև 60 տոկոսի չափով, իսկ այլ գույքի շուկայական արժեքի մինչև 50 տոկոսի չափով. *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ ԹԻՎ 67 ռոռշում)*

11) փոխառության գումարի մարման և հաշվարկված տոկոսագումարների վճարման պայմանները՝

ա. տոկոսագումարը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ փոխառուին տրամադրված փոխառության գումարի մնացորդի նկատմամբ՝ որպես հիմք ընդունելով օրացուցային տարին, բաժանարարը՝ 365 օր: Տոկոսների հաշվարկը սկսվում է փոխառության գումարը փոխառուի հաշվեհամարին փաստացի մուտքագրելու օրվանից.

բ. փոխառության գումարի և հաշվարկված տոկոսագումարների մարումները փոխառուի կողմից իրականացվում են փոխառության գումարի տրամադրման ամսվա հաջորդող ամսից սկսած ամսական պարբերականությամբ՝ մայր գումարի հավասարաչափ կամ անուիտետ մարումների եղանակով (փոխառուի ընտրությամբ).

գ. փոխառության գումարի և հաշվարկված տոկոսագումարների մարումները փոխառուի կողմից իրականացվում են բանկային փոխանցմամբ կամ «Արցախփոստ»

ՓԲԸ ստորաբաժանումների միջոցով կամ էլեկտրոնային այլ եղանակով, իսկ նշված եղանակներով մարում կատարելու անհնարինության դեպքում՝ կանխիկ:

**V. ՄԻԱՆՎԱԳ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑՈՂ ՇԱՀԱՌՈՒԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՄԲԻ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

19. Բնակելի տարածքի գնման նպատակով միանվագ անհատույց գումարի տրամադրման պետական ֆինանսական աջակցությունից կարող է օգտվել սույն կարգի 4-րդ կետի 3-րդ, 6-րդ և 8-րդ ենթակետերում նշված շահառուն:

20. Սույն կարգի 19-րդ կետում նշված շահառուների կողմից բնակելի տարածքի գնման համար անհրաժեշտ կանխավճարի՝ սույն կարգի 11-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված չափով գումարը վճարելու դեպքում, Հիմնադրամը նրանց տրամադրում է միանվագ անհատույց գումար՝ առուվաճառքի գործարքի արժեքի 20 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան 1 000 000 ՀՀ դրամը: *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

21. Միանվագ անհատույց գումարի տրամադրման պայմանների կատարման և նպատակային օգտագործման նկատմամբ կողմերի պարտավորություններն ու իրավունքները սահմանվում են Հիմնադրամի և շահառուի միջև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց գումարի տրամադրման մասին կնքված պայմանագրով, որի ձևը սահմանում է Հիմնադրամը:

22. Սույն կարգի 19-րդ կետում նշված շահառուներին տրամադրված միանվագ անհատույց գումարը ենթակա է վերադարձման Հիմնադրամ՝ նրանց կողմից փոխառության ստացման պահից հինգ տարվա ընթացքում նպատակային փոխառությամբ գնված բնակելի տարածքը օտարելու դեպքում:

**VI. ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

23. Պետական ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով շահառուն Հիմնադրամ է ներկայացնում հայտ՝ կցելով սույն կարգով սահմանված փաստաթղթերը: Հայտի ձևը սահմանվում է Հիմնադրամի կողմից:

24. Հայտով ներկայացված տեղեկությունների հավաստիությունը պարզելու նպատակով Հիմնադրամը պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններից, ԱՔՌԱ վարկային բյուրոյից և այլ կառույցներից ու կազմակերպություններից կարող է ստանալ ԱՀ օրենսդրությամբ չարգելված եզրակացություններ, պարզաբանումներ և տեղեկություններ (շահառուի համաձայնությամբ):

25. Հայտը համարվում է ընդունված միայն այն դեպքում, երբ պահանջվող փաստաթղթերը ներկայացված են ամբողջությամբ: Հայտերին տրվում են հերթական

համարներ՝ ընդունման պահի դրությամբ, առանց շահառուներին ըստ կարգավիճակի խմբավորման:

26. Հայտերը քննարկվում են ըստ գրանցման համարների հերթականության:

27. Հիմնադրամն ընդունված հայտը առավելագույնը տասնաշխատանքային օրվա ընթացքում քննարկում և կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) հայտը համապատասխանում է բնակելի տարածք ձեռք բերելու կամ վերանորոգելու համար փոխառության տրամադրման պայմաններին.

2) հայտը համապատասխանում է բնակելի տարածք գնելու նպատակով փոխառության տրամադրման պայմաններին և միանվագ անհատույց գումարի տրամադրման հիմքերին.

3) հայտը համապատասխանում է բնակելի տարածք գնելու նպատակով փոխառության տրամադրման պայմաններին, սակայն չի համապատասխանում միանվագ անհատույց գումարի տրամադրման հիմքերին.

4) հայտը չի համապատասխանում բնակելի տարածք ձեռք բերելու կամ վերանորոգելու նպատակով փոխառության տրամադրման պայմաններին.

5) հայտը ենթակա է լրամշակման:

28. Հիմնադրամը հայտը մերժում է, եթե՝

1) շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին կամ ներկայացված փաստաթղթերում առկա են ոչ արժանահավատ տվյալներ,

2) առկա է շահառուի կողմից պարտավորությունը չմարելու ակնհայտ միտում,

3) շահառուն Հիմնադրամում և/կամ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամում, ֆինանսավարկային կազմակերպություններում ունի 90 օր և ավելի ժամկետանց պարտավորություն,

4) փոխառություն - գրավի արժեք հարաբերությունը չի համապատասխանում սույն կարգի 18-րդ կետի 10-րդ ենթակետի դրույթներին,

5) շահառուն նախկինում օգտվել է սույն կարգով սահմանված պետական ֆինանսական աջակցության նույն ձևից, բացառությամբ սույն կարգի 6-րդ կետով սահմանված դեպքերի.

6) շահառուն բնակելի տարածք է գնում մերձավոր ազգականից կամ գնում է մերձավոր ազգականի կողմից վերջին հինգ տարվա ընթացքում օտարված բնակելի տարածքը.

7) առուվաճառքի գործարքի արժեքը գերազանցում է անշարժ գույքի գնահատողի որակավորման վկայական ունեցող անձի կողմից տրված հաշվետվությունում նշված շուկայական արժեքի չափը.

8) շահառուի ֆինանսական հնարավորությունների ուսումնասիրության արդյունքում: *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀՆ թիվ 67 որոշում)*

28.1. Հիմնադրամը հայտը կարող է մերժել շահառուի կողմից բնակարանային պայմանների արհեստական վատթարացման փաստի առկայության դեպքում: *(լրաց.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ ԹԻՎ 67 որոշում)*

29. Հիմնադրամը քննարկման արդյունքում հայտի մերժման մասին որոշումն ընդունելու դեպքում շահառուին ծանուցում է ոչ ուշ, քան որոշումն ընդունելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով հայտի մերժման պատճառը:

30. Հիմնադրամը քննարկման արդյունքում դրական որոշում ընդունելու դեպքում տեղեկացնում է շահառուին:

31. Հայտի հաստատման մասին որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, որից հետո 25 աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամի ու շահառուի միջև կնքվում են համապատասխան պայմանագրեր:

32. Հիմնադրամը փոխառության գումարը տրամադրում է շահառուին՝ կնքված պայմանագրերից ծագող իրավունքները լիազոր մարմնում գրանցելուց և իրավունքների պետական գրանցումը հավաստող փաստաթղթերը Հիմնադրամ ներկայացնելուց հետո 10 բանկային օրվա ընթացքում:

33. Հիմնադրամը առաջին խմբի հաշմանդամ և սույն կարգի 4-րդ կետի 3-րդ, 4-րդ, 9-րդ, 10-րդ ենթակետերում նշված շահառուների ներկայացրած հայտի քննարկման արդյունքում դրական որոշում ընդունելու դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությանը ու Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությանը՝ սույն կարգի 10-րդ կետով նախատեսված պահանջի կատարումն ապահովելու նպատակով:

VII. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԱՊՐՈՒՅՔԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

34. Կնքված նպատակային փոխառության տոկոսադրույքի վերանայման նպատակով շահառուն Հիմնադրամ է ներկայացնում դիմումը և կից փաստաթղթերը՝

1) շահառուի ընտանիքում անչափահաս երեխաների թվաքանակի աճը հավաստող փաստաթղթեր:

2) սույն կարգի 4-րդ կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերում նշված շահառուի կարգավիճակը հավաստող փաստաթղթեր:

35. Սույն կարգի 34-րդ կետում նշված հիմքերով փոխառության տոկոսադրույքը կվերանայվի միայն տվյալ փոխառության գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության դեպքում:

36. Շահառուի կողմից սույն կարգի 34-րդ կետում նշված փաստաթղթերը դիմումին կից ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում շահառուի փոխառության տոկոսադրույքը վերանայվում է՝ համապատասխանեցնելով սույն կարգի 17-րդ կետին և 18-րդ կետի 1-ին ենթակետին:

37. Շահառուի կամ նրա ամուսնու մահվան դեպքում՝ հաստատող փաստաթուղթը դիմումին կից ներկայացվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրված փոխառությունը դառնում է անտոկոս:

38. Սույն կարգի 4-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերում նշված շահառուի՝ մինչև երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում, բացառությամբ շահառուի առողջական վիճակի պատճառով ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ զինվորական ծառայության համար ոչ պիտանի կամ սահմանափակ պիտանի ճանաչման կամ հաստիքների կամ զինված ուժերի թվակազմի կրճատման դեպքերի, նախատեսված հիմքով փոխառության տարեկան տոկոսադրույքը սահմանվում է սույն կարգի 18-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության միջնորդությամբ զինվորական ծառայությունից արձակվելու մասին տրված տեղեկանքի հիման վրա:

39. Մարումների ժամանակացույցով սահմանված փոխառության գումարը և հաշվարկված տոկոսագումարները՝ շահառուի կողմից չվերադարձման դեպքում փոխառության ժամկետանց գումարի նկատմամբ հաշվարկվում է ԱՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տոկոսներ:

40. Սույն կարգի 39-րդ կետում նշված մարումների ժամանակացույցով չորս անընդմեջ խախտման դեպքում Հիմնադրամը շահառուին ներկայացնում է ամբողջ փոխառության գումարի, հաշվարկված տոկոսագումարի և տույժերի վճարման պահանջ (այսուհետ՝ դրամական միջոցների վճարման պահանջ) և ԱՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառում հարկադրանքի իրավունքը:

40.1. Սույն կարգի 49.1-ին և 49.2-րդ կետերով նախատեսված պայմանների խախտման դեպքում Հիմնադրամը շահառուին կարող է ներկայացնել պարտավորության վաղաժամկետ մարման պահանջ: *(լրաց.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀՆԹ թիվ 67 որոշում)*

41. Շահառուն պարտավոր է դրամական միջոցների վճարման պահանջը գրավոր ստանալուց հետո 60 օրացույցային օրվա ընթացքում փոխառության գումարը, հաշվարկված տոկոսագումարը և տույժերը փոխանցել Հիմնադրամի բանկային հաշվին:

42. Շահառուն կարող է դադարեցնել կիրառվող հարկադրանքի իրավունքը՝ կատարելով սույն կարգի 41-րդ կետում սահմանված պահանջը կամ դրա այն մասը, որի կատարումը ժամկետանցվել է:

43. Շահառուի կողմից ստացված փոխառության գումարի ոչ նպատակային օգտագործման փաստը հիմնադրամի և/կամ այլ մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա արձանագրելու և/կամ ստացված փոխառության գումարով ձեռք բերված բնակելի տարածքի ոչ նպատակային օգտագործման դեպքերում Հիմնադրամը շահառուին տալիս է հնարավորություն եռամսյա ժամկետում վերացնել տվյալ խախտումները, իսկ այդ ժամկետի ընթացքում դրանց

չվերացման դեպքում Հիմնադրամը շահառուին ներկայացնում է դրամական միջոցների վճարման պահանջ և ԱՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառում հարկադրանքի իրավունքը:

VIII. ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

44. Սույն կարգով պետական ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով շահառուն Հիմնադրամ է ներկայացնում հայտ:

Հայտին կից ներկայացվում են՝

1) շահառուի և նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը.

1.1) բնակելի տարածքի գնման դեպքում՝ շահառուի և վաճառողի, նրանց ամուսինների ծննդյան վկայականների պատճենները, ինչպես նաև վաճառողի ամուսնության վկայականի պատճենը (առկայության դեպքում). *(լրաց.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

2) տեղեկանք շահառուի ընտանեկան կարգավիճակի մասին՝ տրված պետական լիազոր մարմնի (ԲԿԱԳ) կողմից.

3) տեղեկանք շահառուի ընտանիքի կազմի մասին՝ տրված շահառուի հաշվառման կամ բնակության համայնքի կողմից.

4) տեղեկանք աշխատավայրի և աշխատավարձի չափի վերաբերյալ.

5) այլ դրամական եկամուտների աղբյուրը և չափը հաստատող փաստաթղթեր՝ թոշակ, նպաստ և այլն (առկայության դեպքում).

6) շահառուի բնամթերային եկամուտների աղբյուրը և չափը հիմնավորող տեղեկանք՝ տրված շահառուի հաշվառման կամ բնակության համայնքի կողմից.

7) շահառուի փախստական հանդիսանալու դեպքում փախստականի վկայականի բնօրինակը.

8) շահառուի՝ առաջին, երկրորդ և երրորդ կարգի զինվորական հաշմանդամ հանդիսանալու դեպքում, հաշմանդամության խմբի մասին լիազոր մարմնի (համապատասխան շրջանի զինկոմիսարիատի) կողմից տրված տեղեկանք.

9) շահառուի՝ զոհված զինծառայողի զավակ հանդիսանալու դեպքում, ծննդյան վկայականի բնօրինակը (բացակայության դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից տրված համապատասխան տեղեկանքը), զոհված զինծառայողի մահվան վկայականը և համապատասխան շրջանի զինկոմիսարիատի կողմից տրված՝ զոհված զինծառայողի կարգավիճակը հավաստող տեղեկանքը. *(փոփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

10) շահառուի՝ սպայական կազմի կամ պայմանագրային զինծառայող հանդիսանալու մասին Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից տրված տեղեկանք.

11) շահառուի՝ միաձնող ընտանիք հանդիսանալու դեպքում, հավաստող փաստաթղթերը. *(փուփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

12) շահառուի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ հանդիսանալու դեպքում՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառված լինելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրված տեղեկանք.

13) ձեռք բերվող կամ վերանորոգվող բնակելի տարածքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի բնօրինակը.

14) տեղեկանք բնակելի տարածքի վերաբերյալ գրանցված սեփականության իրավունքի և վերջին հինգ տարում օտարված անշարժ գույքի մասին՝ տրված անշարժ գույքի կադաստրի վարչության կողմից.

15) բնակելի տարածքի գնման համար անհրաժեշտ կանխավճարի առկայության մասին հայտարարագիրը.

16) գնվող բնակելի տարածքի առուվաճառքի կողմերի միջև գրավոր կնքված նախնական համաձայնությունը.

17) բնակելի տան կառուցման դեպքում՝ համապատասխան բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ շահառուի՝ սեփականության իրավունքը հավաստող պետական գրանցման վկայականի պատճենը. *(փուփ.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

18) մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպության կողմից կազմված բնակելի տան կառուցման(կամ բնակելի տարածքի կցակառուցման) համար առաջարկվող՝ համայնքի կողմից հաստատված նախագիծը և նախահաշիվը.

19) բնակելի տան կառուցման կամ բնակելի տարածքի կցակառուցման համար անհրաժեշտ շինարարության թույլտվության բնօրինակը.

20) տեղեկանք գույքի առանձին որակական, քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ՝ տրված անշարժ գույքի կադաստրի վարչության համապատասխան բաժնի կողմից.

21) սույն կարգի այլ կետերով սահմանված դրույթներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր:

45. Հիմնադրամը սույն կարգի 44-րդ կետում նշված փաստաթղթերի որոշ մասը (շահառուի համաձայնությամբ) կարող է ստանալ համապատասխան մարմիններից՝ էլեկտրոնային կամ փաստաթղթային հարցման եղանակով:

IX. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

46. Սույն կարգով սահմանված պետական ֆինանսական աջակցությունը և դրա իրականացման հետ կապված ծախսերը կատարվում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից տվյալ տարվա համար հիմնադրամի պետական աջակցության ծրագրերի համար նախատեսված միջոցների հաշվին:

47. Պետական ֆինանսական աջակցության իրականացման հետ կապված ծախսերն են.

1) բնակելի տան կառուցման և բնակելի տարածքի վերանորոգման դեպքում՝

ա. միասնական տեղեկանքի տրամադրման համար վճարվող պետական տուրքը,

բ. անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար վճարվող պետական տուրքը.

2) բնակելի տարածքի գնման դեպքում՝ անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար վճարվող պետական տուրքը:

Պետական ֆինանսական աջակցության իրականացման հետ կապված ծախսերը յուրաքանչյուր շահառուի համար Հիմնադրամի կողմից կատարվում են մեկ անգամ:

X. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

48. Բնակելի տան կառուցման կամ բնակելի տարածքի կցակառուցման նպատակով նախկինում տրամադրված փոխառությունների տարեկան տոկոսադրույքը 2019 թվականի ապրիլի 01-ից Հիմնադրամի կողմից կհամապատասխանեցվի սույն կարգի 18-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափին՝ տվյալ փոխառության գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության դեպքում, իսկ դրանց առկայության դեպքում՝ ժամկետանց պարտավորությունների լրիվ կատարումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

XI. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

49. Հիմնադրամը սույն կարգով սահմանված պետական աջակցություն ստացած շահառուների մոտ տարին մեկ անգամ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ գործադիր մարմնի կողմից հաստատված կարգով:

49.1. Պետական աջակցությամբ բնակելի տարածք ձեռք բերած շահառուն (շահառուները) (կառուցելու դեպքում՝ շինարարության նախանշված ժամկետի ավարտից հետո) եռամսյա ժամկետում պարտավոր է (են) հաշվառվել այդ բնակելի տարածքում և համապատասխան փաստաթղթերը ներկայացնել Հիմնադրամ: *(լրաց.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

49.2. Սույն կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով աջակցություն ստացած շահառուները պարտավոր են նոր ձեռքբերվող բնակելի տարածքի սեփականության իրավունքի գրանցման պահից (կառուցման դեպքում՝ շինարարության նախանշված ժամկետի ավարտից) հետո մեկ տարվա ընթացքում վաճառել մինչև սույն կարգով սահմանված պետական աջակցություն ստանալն ունեցած բնակելի տարածքը տվյալ պահին գործող լիկվիդային արժեքից ոչ ցածր արժեքով և գործարքի արդյունքում ստացված

գումարն ամբողջությամբ ուղղել պարտավորության մարմանը, բացառությամբ եթե պետական աջակցությունից օգտվելուց հետո շահառուն միավորել է ձեռքբերված ու մինչև պետական աջակցություն ստանալն իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տարածքները և Հիմնադրամ ներկայացրել միավորման արդյունքում բնակելի տարածքի նկատմամբ իր սեփականության իրավունքը հավաստող պետական գրանցման վկայականի պատճենը: *(լրաց.՝ 27.12.2019թ. ԱՆՀ ՀԽ թիվ 67 որոշում)*

50. Սույն կարգով սահմանված պետական աջակցություն ստանալու նպատակով անհրաժեշտ անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, ինչպես նաև բնակելի տարածքի վերանորոգման ծախսերի նախահաշիվը կազմվում է Հիմնադրամի կողմից:

51. Սույն կարգի 50-րդ կետով սահմանված անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը և/կամ բնակելի տարածքի վերանորոգման ծախսերի նախահաշիվը շահառուն կարող է պատվիրել համապատասխան լիցենզավորում կամ որակավորում ունեցող իր նախընտրած կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը:

52. Սույն կարգով սահմանված պետական աջակցության ձևերից օգտվելու նպատակով Հիմնադրամի գործադիր մարմինը շահառուներին տալիս է կարգի դրույթների պարզաբանումներ:

Հիմնադրամը աջակցում է շահառուին սույն կարգով սահմանված պետական ֆինանսական աջակցությունից օգտվելու նպատակով ներկայացվող փաստաթղթերի ստացման ու լրացման, ծագող իրավունքների ու պարտականությունների պարզաբանման, բնակելի տարածքի ձեռք բերման կամ վերանորոգման նպատակով ստացված փոխառության սպասարկման և միջնորդություն իրականացնող այլ կազմակերպությունների հետ հարաբերությունների ընթացքում:

53. Սույն կարգի դրույթներին համապատասխան մեթոդական ցուցումները և գործընթացը կարգավորող ընթացակարգերը ընդունում է հիմնադրամը:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Ք.ԽԱԶԱՏՏՅԱՆ

1) Փոփոխություններ և լրացումներ՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 27.12.2019թ. թիվ 67 որոշում

2) Փոփոխություններ և լրացումներ՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 23.03.2020թ. թիվ 15 որոշում